3717

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՄԿ (բ) Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԴԻՄՈՒՄԸ)

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

338 1/3 91

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ Կ (բ) Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԴԻՄՈՒՄԸ)

ԱՐԽԻՎ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1788
ԳԼԱՎԼԻՏ 6707 (Բ)
ՊԱՏՎԵՐ 4295
ՏԻՐԱԺ 10.000

12525 գր

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

## Բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական, հողային յեվ կոլտնտեսական կազմակերպություններին

Համ Կ(բ)Կ-ի ԿԿ-ը և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը գտնում են, որ գյուղատնտեսության ասպարեզում մոտակա ժամանակներում մեր կենտրոնական խնդիրն է անասնաբուծության սոցիալիստական հատվածը—խորհտնտեսությունները և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներն ստեղծելու և ամրացնելու աշխատանքը։ **1931** և **1932** թվականներին անասնաբուծության ծավալման ասպարեզում պետք է լինեն նույնպիսի վճռական բեկման տարիներ, ինչպիսին էյին **1929** և **1930** թվականները սոցիալիստական հացահատիկային տնտեսության կազմակերպման բնագավառում։

*Հանրայնացված անասնաբուծությունը (խորհտնտեսությունները և կոլտնտեսական ապրանքային ֆերմաները), չնայած դեռ իրենց կարճատև գոյության, ստեղծեց խոշոր նախիր (2 միլիոն գլուխ յեղջյուրավոր անասուն անասնաբուծական տնտեսություններում, 745 հազար կով կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում, կես միլիոն խոզ «Սվինովոդի» խորհտնտեսություններում, 250 հազար մայր խոզ կոլտնտեսական ֆերմաներում), զգալի տեղ գրավեց ապրանքային յուղը*

*արտադրության մեջ (մինչև սույն թվի հուլիսի մեկը կոլտնտեսական ապրանքային ֆերմաները և անասնաբուծական կոլտնտեսությունները հանձնեցին 680 հազար փութ յուղ)։*

*ՍՍՀՄ-ի Ժողկոմխորհը և Համկ (բ) Կ-ի ԿԿ-ը, բոլոր կուսակցական, խորհրդային և կոլտնտեսական կազմակերպությունների ուշադրությունն են հրավիրում այն հանգամանքի վրա, վոր* հանձինս կոլտնտեսական ապրանքային ֆերմաների և ձվահան-թռչնաբուծական կայանների, գտնվել ե հանրային անասնաբուծության և թռչնաբուծության այնպիսի ձև, վորն ամենից ավելի համապատասխանում ե կոլեկտիվ տնտեսության զարգացման ներկա արտելային աստիճանին և վորը խորհտնտեսությունների հետ միասին ամենից արագ ե լուծում խոշոր ապրանքային անասնաբուծություն ստեղծելու խնդիրը։ *Տնտեսության այդ ձևը բարձրացնում է ապրանքայնությունը, տալիս է մոտ 70 տոկոս ապրանքային կաթ և յուղ՝ փոխանակ անհատական տնտեսությունների 10–20 տոկոսի և կոլտնտեսությունների սովորական հանրայնացված հոտերի 10–30 տոկոսի։*

Տնտեսության այդ ձևն արժանի յե կուսակցական և խորհրդային բոլոր օրգանների լիակատար աջակցության։ *Կոլտնտեսական ֆերմաները, հանդիսանալով կոլտնտեսության ամենաշահավետ գյուղատնտեսական ճյուղերից մեկը, զարգանալով կոլտնտեսականների անհատական-սպառողական անասնաբուծական տնտեսության և կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի հետ միասին, հետագայում անտարակույս դառնալու յեն պետության համար կարևորագույն ապրանքային անասնաբուծական մթերք արտադրողներ։*

*Արձանագրելով անասնաբուծական խորհտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների ծավալման ասպարեզում ձեռք բերված քանակական բեկումի հաջողությունները, ՀամԿ (բ)Կ-ի ԿԿ-ն և ՍՍՀՄ-ի Ժողկոմխորհը մատնանշում են վորակական ցուցանիշների խիստ հետ մնալը,— անբավարար կերակրումը, անասունների վատ խնամքը, անտնտեսավարությունը մի շարք խորհտնտեսություններում, նախիրների լրացման վորոշ չափով հետ մնալը «Սոյուզ-մյասո» խորհտնտեսություններում, հանգամանքներ, վորոնք խոչընդոտ են հանդիսանում իրագործելու անասնաբուծական խորհտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների շինարարության 1934 թ. ծրագիրը, վոր ընդունել է կառավարությունը։*

*Կուսակցությունը խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների շինարարության մեջ լուծեց հացահատիկային պրոբլեմը և այդպես վճռական առաջադիմություն ստեղծեց տեխնիկական մշակույթների (բամբակի, վուշի, ճակնդեղի) զարգացման ասպարեզում։*

*Սոցիալիստական անասնաբուծություն ստեղծելու առաջին քայլերը (անասնաբուծական խորհտնտեսություն, կոլտնտեսական ապրանքային, կաթնային և խոզաբուծական ֆերմաներ, ձվահան-թռչնաբուծական կայաններ, հանրային նախիրներ կոլտնտեսություններում) ցույց են տալիս, վոր անասնաբուծությունը բարձրացնելու, անասնաբուծական ապրանքային մթերքն ավելացնելու խնդիրը հնարավոր է լուծել միևնույն փորձված ուղիով, այսինքն՝ ստեղծելով և ամ-*

բացնելով խոշոր հանրային անասնաբուծական տնտեսություններ:

1931 թվականին պետք է ամուր հիմք դցել անասնաբուծության սոցիալիստական հատվածի հետագա արագ զարգացման համար, վորպեսզի գյուղատնտեսության արտադրության առայժմ դեռ թույլ հանրայնացված այդ ճյուղում հաղթանակի իրոք կազմակերպված, մեքենայացված, գիտության վերջին նվաճումների վրա հիմնված խոշոր սոցիալիստական տնտեսությունը:

Վերոհիշյալի հիման վրա, ՀամԿ (բ)Կ-ի ԿԿ-ը և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը վորոշում են՝

1) Անասնաբուծական խորհտնտեսություններում և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում, մինչև 1931 թվականի վերջը, անասունների թիվը հասցնել՝ «Սկոտովոդի» գծով 2,800 հազար գլխի, «Սվինովոդի» գծով՝ 1.900 հազար գլխի, հանրապետական կաթնային տրեստներում 260 հազար կովի, վորից ՌՍՖԽՀ «Մոլոկոտրեստ»-ում 130 հազար կովի, «Մասլոտրեստում»՝ 180 հազարի (ավելացնելով պլանում նախատեսված կովերի թիվը 70 հազար գլխով), «Սայուզսախար»-ում՝ 140 հազար գլուխ կովի (ավելացնելով պլանում նախատեսված կովերի թիվը 580 հազար գլխով), և 40 հազար գլուխ մայր խոզի, «Ովցեվոդում» 4.800 հազար գլուխ վոչխարի (ավելացնելով պլանում նախատեսված վոչխարների թիվը 800.000 գլխով), ՌՍՖԽՀ յեղջերաբուծական տրեստում՝ 200 հազար գլխի, թռչնաբուծական տրեստում՝ 3.000 հազար թռչունի, կաթնակոոպտկենտրոնում՝ 1.500 հազար գլուխ կթան կովի, խոզաբուծական կոոպտկենտրոնում՝ 700 հազար



գլուխ մայր խոզի, ճտահան, թռչնաբուծական կենտրոնում 10 միլիոն թռչունի:

2) Առաջարկել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատին՝ մինչև 1931 թվականի վերջը անասնաբուծական խորհտնտեսություններին և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներին հանձնել 1 միլիոն 700 հազար գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն, վորից 1 միլիոն 200 հազար գլուխը մինչև հոկտեմբերի մեկը, 2 միլիոն 500 հազար գլուխ հորթ և ջահել անասուն, վորից 2 միլիոն 100 հազար գլուխը մինչև հոկտեմբերի մեկը, 415 հազար մայր խոզ, վորից 315 հազարը մինչև հոկտեմբերի մեկը, 2 միլիոն գլուխ վոչխար՝ մինչև հոկտեմբերի մեկը: Մինչև հոկտեմբերի մեկը լրիվ հանձնել 570 հազար հավ, 75 հազար սագ, 300 հազար բադ, ապահովելով հոտերի լրացման յեռամսյակային և ամսական պլանների խստիվ կատարումը:

3) Առաջարկել Կոլտնտկենտրոնին՝ լրացնել կոլտնտեսությունների հանրայնացված հոտերը, հասցնելով այդ լրացման չափը 1931 թվականին առնվազն 1,5 միլիոն գլուխ հորթի, 500 հազար գլուխ խոճկորի, 1 միլիոն գլուխ գառան և 1932 թվականին առնվազն 4 միլիոն հորթի, 3 միլիոն խոճկորի, 2 միլիոն գառան: Այդ նպատակով կոլտնտեսությունների վարչությունները պետք է ջահել անասուններ գնեն իրենց անդամներից և հանրայնացնեն կոլտնտեսականների անասունների սերունդի մի մասը:

4) Պարտավորեցնել տեղական կուսակցական կազմակերպություններին և հողային որգաններին՝ լիակատար ոգնություն ցույց տալ կոլտնտեսական անասնաբուծական ֆերմաների հոտերի լրացման, միջոցներ

ձեռք առնելով, որ կոլտնտեսություններն այդ ֆերմաներին հատկացնեն իրենց հանրայնացված անասունների մի մասը և գնեն իրենց անդամներից կով, խոզ և մանավանդ հորթ ու խոճկոր ֆերմաների հոտերը լրացնելու նպատակով:

5) Առաջարկել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատին, անասունները խորհտնտեսություններին և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներին հանձնել առավելապես անմիջականորեն սկզբնական մթերակայաններից ուղղակի հաշվով, որ «Սայուզմյասոյի» մթերած անասունները գիրացման հոտերը և սպանդանոցներն ուղարկվեն միմիայն այն ժամանակ, երբ այդ անասունները քննվեն, արտադրական նպատակների պիտանի անասունները ջոկվեն խորհտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների հոտերը պլանի համաձայն լրացնելու համար: Անասնաբուծական խորհտնտեսությունների համար անասուններ ընտրողները պարտավոր են «Սայուզմյասոյի» մթերակայաններում անասունները ջոկել 5–8 օրում:

Առաջարկել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատին միջոցներ ձեռք առնել, որ ճշտիվ կատարվի ցեղական կովերի ու ցուլերի մորթելն արգելող օրենքը և ամենախիստ պատասխանատվության կանչել այդ օրենքը խախտողներին:

Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի օրգաններին՝ «Սայուզմյասոյի» մթերման բազաների հանձնած ցեղական անասուններ ընդունել առանց բացառության բոլոր շրջանների խորհտնտեսությունների հոտերը լրացնելու համար, անկախ տվյալ շրջանի հոտերի լրացման պլանից:



6) ՀամԿ(բ)Կ-ի ԿԿ-ն և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը, ճանաչելով, որ անցյալ ձմեռ անասնաբուծական խորհտնտեսություններում կոտորվել են շատ անասուններ, մանավանդ ջահել անասուններ, առաջարկում են անասնաբուծական տրեստներին, կոլտնտեսական ապրանքային ֆերմաների կենտրոններին, հողային օրգաններին և կոլտնտմիություններին, համապատասխան միջոցներ ձեռք առնել վճռականորեն բարելավվելու անասունների խնամքը, նվազեցնելու անասունների կոտորածը զանազան տեսակի հիվանդություններից և անասունների վատ պահպանումը, մոտակա ժամանակամիջոցում ավելացնել հոտերի սերունդը խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում:

7) Հաստատել անասնաբուծական տրեստների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների արտադրելիք և հանձնելիք մթերքների 1931 թվականի պլանը հետևյալ չափով՝

ա) յուղ՝ 34,9 հազար տոնն, որից «Մասլոտրեստը» պետք է արտադրի և հանձնի 3,5 հազար տոնն, «Սկոտովոդը» 4 հազար տոնն, հանրապետական կաթնային տրեստները հազար տոնն, «Սայուզգոսխարը» 3,4 հազար տոնն — ընդամենը՝ խորհտնտեսությունները հանձնելու են 11,9 հազար տոնն յուղ:

Կաթնակոլտնտկենտրոնի ապրանքային ֆերմաները պետք է հանձնեն 23 հազար տոնն (փոխադրած կաթի՝ 510 հազար տոնն):

բ) Միս՝ 103,6 հազար տոնն, որից «Սկոտովոդը» պետք է հանձնի 48,3 հազար տոնն, «Սվինովոդը» 18 հազար տոնն, «Օվցևոդը» 8 հազար տոնն, հանրապետական անասնաբուծական տրեստները և «Մասլոտրես-

տը» 6 հազար տոնն, «Սայուզսախարը» 18,5 հազար տոնն, խոզաբուծական կոլտնտկենտրոնը՝ 4,8 հազար տոնն։

գ) Բուրդ՝ «Ավցեվոդը» 8 հազար տոնն ըստ պայմանագրության.

դ) Ձու՝ 50·3 հազար արկղ, վորից՝ թռչնաբուծական տրեստները՝ 5·5 հազար արկղ, ճտահան-թռչնաբուծական կենտրոնը՝ 45 հազար արկղ.

յե) կաթ՝ հանրապետական կաթնա-բանջարաբուծական տրեստները— 160·000 տոնն.

զ) բնապանիր (казеин)— «Մասլոտրեստը»՝ 1 միլիոն տոնն.

է) պանիր՝ 5·9 հազար տոնն, վորից Մասլոտրեստը հազար տոնն պանիր և «Ավցեվոդը» 1·9 հազար տոնն «Բրինզ» պանիր։

8) Հաստատել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի պլանը, վորի համաձայն հանրային սննդի, արդյունաբերության և մերձքաղաքային տնտեսությունների ավելցուկներով 1933 թ. հունվարի մեկը գիրացվելու յե 500 հազար գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն և 2·100 հազար գլուխ խոզ, վորից 125 հազար խոշոր յեղջյուրավոր անասուն և 451·2 հազար գլուխ խոզ 1931 թ. չորրորդ յեռամսյակում։

9) Մատնանշելով մանր անասնաբուծության (խոզաբուծության, թռչնաբուծության և ճագարաբուծության) հսկայական նշանակությունը մսի մատակարարման գործում, ՀԱՄԿ (բ) Կ-ի ԿԿ-ն և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհն առաջարկում են տեղական բոլոր կուսակցական, հողային և կոլտնտեսական կազմակերպություններին



հատուկ ուշադրություն նվիրել անասնաբուծության այդ արագահաս ճյուղերի զարգացմանը։

Առաջարկել խոզաբուծական Կոլտնտկենտրոնին 1932 թ. գիրացնել և պետությանը հանձնել առնվազն 2 միլիոն գլուխ խոզ, բացի այդ, առաջարկել կոլտնտկենտրոնին խնդիր առաջադրելու խոզաբուծական և թռչնաբուծական ֆերմաներ չունեցող կոլտնտեսություններին յուրաքանչյուր կոլտնտեսությունում կոլեկտիվ կերպով բուծել և կոլեկտիվ կերպով պետության վաճառել 10-ից մինչև 50 հատ գիրացված խոզ, նայած տնտեսության կարողության, վոչխարաբուծական շրջաններում՝ 10-ից մինչև 50 վոչխար, թռչնաբուծական շրջաններում՝ 100-ից մինչև 500 հատ թռչուն. ճագարաբուծական շրջաններում՝ 100-ից մինչև 300 ճագար։

Առաջարկել Ցենտրոսայուզին, նույնպես խնդիր առաջադրել գյուղական սպառկոոպներին։

Հանձնարարել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատին, Հողժողկոմատի Կոլտնտկենտրոնի և Ցենտրոսայուզի հետ միասին 2-տասնորյակում ձեռնարկումներ մշակել վերոհիշյալ առաջադրանքը հաջողությամբ կատարած կոլտնտեսություններին և սպառողական ընկերություններին նյութապես խրախուսելու համար։

10) Անասնաբուծական խորհտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների կողմից ապրանքային արտադրանքը հանձնելու պլանի կատարումն ապահովելու համար՝

ա) Պարտավորեցնել հողային օրգաններին ավելի ուժեղացնել իրենց այն հսկողությունը, վոր սահմանել են նրանք խորհտնտեսությունների և ապրանքային

ֆերմաների կողմից ապրանքային արտադրանքը հանձնելու ընթացքի վրա, խիստ պատասխանատվության կանչելով, վորպես ժողովրդական գույքը վատնողների, խորհտնտեսությունների և ապրանքային ֆերմաների այն ղեկավարներին, վորոնք փչացնում են ապրանքային արտադրանքը։

բ) Հատուկ պարգևներ նշանակել արտադրանքի հանձնման պլանները գերակատարող առանձին խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների և ապրանքային ֆերմաների համար, ինչպես դրամով և մթերքով վարձատրելով պլանները գերակատարած խորհտնտեսությունների ղեկավարներին, բանվորներին և մասնագետներին, այնպես էլ ընդհանրապես այդպիսի խորհտնտեսություններին ու ապրանքային ֆերմաներին պարգևատրելով, պլանից դուրս նրանց մեքենաներ ու տրակտորներ տալով, լրացուցիչ կերպով խտացրած կեր, ցեղական ցուլեր բաց թողնելով և այլն.

գ) խորհտնտեսությունների բոլոր մասնագետների, բարձր վարչական կազմի և բանվորների համար առանց բացառության կիրառել՝ ապրանքային մթերքի արտադրման և հանձնման չափի համաձայն աշխատավարձը բարձրացնելու այն սիստեմը, վոր սահմանել է ԽՍՀՄ-ի Հողժողկոմատը։

11) Պարտավորեցնել ազգային կոմկուսների կենտկոմներին, յերկրկոմներին (մարզկոմներին), դաշնակից և ինքնավար հանրապետությունների ժողկոմխորհներին և շրջգործկոմներին՝ կանոնավոր հսկողություն սահմանել անասնաբուծական խորհտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների հոտերի լրացման ընթացքի վրա և հետևել, վոր խորհտնտեսությունները ու կոլտնտեսական ապրանքային ֆերմաները ժամանակին ու լրիվ հանձնեն ապրանքային արտադրանքը և կատարեն իրենց հոտերի լրացման պլանը։



12) Մասնանշելով, վոր կերի հաստատուն բազան վճռական պայման է հանդիսանում անասնաբուծական խորհտնտեսությունները և կոլտնտեսական ապրանքային ֆերմաները հաջող ծավալելու համար, կոլտնտմիություններին, անասնաբուծական տրեստներին և կոլտնտկենտրոններին, լիովին ապահովել անասնաբուծական խորհտնտեսությունների և կոլտնտեսական ֆերմաների բոլոր հոտերը սեփական կոպիտ և հյութալի կերով։ Այդ նպատակով խոտհնձի ընթացիկ կամպանիայում հնձել խորհտնտեսություններում առնվազն 11 միլիոն հեկտար և կոլտնտեսություններում առնվազն 30 միլիոն հեկտար խոտ. պատրաստել կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում առնվազն 10 միլիոն տոնն սիլոս։

13) Առաջարկել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի անասնաբուծական խորհտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների խտացրած կերի դեֆիցիտը ծածկելու նպատակով, 1931 թ. կերի պետական ռեսուրսներից բաց թողնել 18 միլիոն փութ քուսպ, 60 միլիոն փութ թեփ և 100 միլիոն փութ հացահատիկ, վորից՝ Հողժողկոմատի անասնաբուծական խորհտնտեսությունների խտացրած կերի դեֆիցիտը ծածկելու համար բաց թողնել 15 միլ. փութ քուսպ, 50 միլ. փութ թեփ և 93 միլ. փութ հատիկային կեր. բավարար քանակությամբ սեփական խտացրած կեր չունեցող կոլտնտեսական ապրանքային ֆերմաների խտացրած կերի դեֆիցիտը ծածկելու համար՝ 20 միլ. փութ, վորից 3

ման համաձայն, խորհտնտեսություններին և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներին հատկացվող խտացված կերի ֆոնդերը դնել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի տրամադրության տակ: Այդ ֆոնդերն օգտագործել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի պլաններով և ցուցումներով՝ համաձայնեցրած ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի հետ: Ընդ նմին պետք է խստիվ պահպանել այն կարգը, որի համաձայն կոլտնտեսական ապրանքային ֆերմաներին խտացված կեր է տրվում ըստ կոնտրակտացիոն պայմանագրերով ապրանքային արտադրանքն հանձնելու չափի:

Խորհտնտեսությունների կեր ստանալու կարգը պարզացնելու և բարելավելու համար, բոլոր շրջաններում պահպանել այն սիստեմը, որի համաձայն խորհտնտեսություններն անմիջականորեն կցվում են ելևատորներին, աղացներին և ձիթահան գործարաններին:

18) Համ Կ(բ) Կ-ի ԿԿ-ն և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը, մատնանշելով անասնաբուծական խորհտնտեսությունների հիմնական շինարարության պլանի միանգամայն անբավարար կատարումը, պարտավորեցնում են երկրկոմներին (մարզկոմներին) և ազգային կոմկուսների կենտկոմներին, Սայուզսելստրոյի և անասնաբուծական տրեստներին՝ միջոցներ ձեռք առնել, որ ամենաուշը մինչև 1931 թ. նոյեմբերի 15-ը ավարտվի խորհտնտեսությունների այն շենքերի կառուցումը, որոնք անհրաժեշտ են անասուններին տեղավորելու համար: Այդ նպատակով պարբերաբար, առնվազն ամիսը մեկ անգամ, երկրկոմներում (մարզկոմներում) և շրջկոմներում զեկուցումներ լսել հիշյալ շինարարության ընթացքի մասին, հանձնարարելով երկրկոմների և շրջ-



1/25289

կոմների որևէ անդամին սիստեմատիկ կերպով հետամուտ լինել անասնաբուծական խորհտնտեսությունների հիմնական շինարարության պլանի կատարմանը:

Առաջարկել ԺՏԳԽ-ին և Հաղորդակցության ճանապարհների Ժողկոմատին առաջին երեք յեռամսյակների համար անասնաբուծական խորհտնտեսություններին բաց թողնված շինանյութերի, մանավանդ անտառանյութերի փոխադրումն ավարտել ոչ ուշ, քան մինչև սույն թվի սեպտեմբերի մեկը:

19) Նկատի ունենալով, որ խոշոր կաթնատնտեսության ծավալումն այս տարի պլանի խոչընդոտներից է հանդիսանում կաթ փոխադրելու համար, հատուկ ինվենտարի (սրվակների, անոթ ամանների և այլն) պակասության պատճառով, պարտավորեցնել ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ին և «Վսեկոմպրոմսոյուզին» ծավալել այդ անոթների և ինվենտարի արտադրությունն այնպիսի չափով, որ հնարավոր լինի կաթն անվնաս հասցնել վերամշակող և սպառող վայրերը. այդ նպատակով նախ և առաջ օգտագործել տնայնագործական արդյունաբերությունը:

20) Անասնապահական խորհտնտեսությունները և կոլտնտեսական ապրանքային ֆերմաները՝ ղեկավար աշխատողների և մասնագետների անհրաժեշտ կադրերով ապահովելու համար, առաջարկել անասնապահական տրեստներին և ԽՍՀՄ Կոլտնտեսկենտրոնին.

ա) 1932 թ. յուրաքանչյուր խորհտնտեսում բարձր որակի մասնագետների թիվը հասցնել 6–8 հոգու, միջին որակինը 15–20 հոգու և յուրաքանչյուր կոլտնտեսական ապրանքային ֆերմայում 2–3 բարձր և միջին որակի մասնագետների, ինչպես ԲՏՀ-երի և տեխնի-

ԳՐԱՊԱԼԱՏ

կումների, այնպես էլ պատրաստման ու վերապատրաստման դասընթացների ցանցի միջոցով.

բ) կազմակերպել անասնապահական տրեստների և կոլտնտկենտրոնների սիստեմում նախրապանների, անասնապահների, կթողուհիների, հովիվների, խոզապահների, թռչնապահների, անասնաբուժակների և այլ աշխատավորների կարճատև դասընթացների լայն ցանց.

գ) պարտավորեցնել յերկրային կոմիտեներին, մարզկոմներին և ազգային կոմկուսների կենտկոմներին տաս օրվա ընթացքում անասնապահական տրեստների վարչությունների հետ միասին վերանայել հատուկ կոլտնտկենտրոնների և տրեստների լիազորների ամբողջ կազմը, ի նկատի ունենալով, վոր անհրաժեշտ է ընտրել այնպիսի մարդկանց, վորոնք իրոք գլխեն իրենց գործը և կարող են լավացնել նրա դրվածքը:

դ) Համկոմկուսի (բ) Կենտկոմի կադրերի բաժնին առաջարկվում է մեկ ամսվա ընթացքում հանձնել ԽՍՀՄ Հողժողկոմատին,— անասնապահական խորհտնտեսությունների, «Սկոտովոդի», «Սվինովոդի», «Ովցեվոդի» և «Մոլոչտրեստի» կադրերն ամրապնդելու համար— համապատասխան թվով աշխատավորներ, նոր կազմակերպվող խորհտնտեսությունների դիրեկտորների և դիրեկտորների օգնականների պաշտոնները վարելու և հին խորհտնտեսություններն ամրապնդելու նպատակով.

յե) յելնելով այն հանգամանքից, վոր ավելի յե մեծանում տեղական օրգանների դերը և նրանց պատասխանատվությունը սոցիալիստական անասնապահության զարգացման արդյունքների համար, հատկապես



հոտի շինարարության ու կազմակերպման և ապրանքային պրոդուկցիայի հանձնման բնագավառում, միանգամայն ճիշտ համարել այն, վոր ԽՍՀՄ Հողժողկոմատը ընդլայնել է անասնապահական տրեստների մարզային լիազորների իրավունքները, տալով նրանց մի շարք օպերատիվ ֆունկցիաներ: Հավանություն տալ ԽՍՀՄ Հողժողկոմատի մայիսի 14-ի վորոշմանը, վորով սահմանվում է տրեստների լիազորների իրավունքների ընդլայնումը:

21) Ազգային անասնապահական շրջաններում (Միջին Ասիական հանրապետությունները, Կազակստան, Կիրգիզիա, Բուրյաթ-Մոնղոլիա, Ղարաղալփակիա, Դաղստան, Ղալմուխիա) հանրայնացված անասնապահության ծավալումն ապահովելու համար, հանձնարարել ԽՍՀՄ Մատժողկոմատին և Հողժողկոմատին, վորպեսզի վերոհիշյալ հանրապետությունների և մարզերի կառավարությունների հետ միասին, հացամթերման պլանի կատարման, ցանքի կամպանիայի ու մսամթերման պլանների կազմության և քոչվոր ազգաբնակչության նստակյաց դարձնելու ձեռնարկումների մշակման ժամանակ, ապահովել այդ շրջաններում բոլոր այն միջոցների կիրառումը, վորոնք կխթանեն ապրանքային անասնապահության զարգացումն այդ շրջաններում, այն է.

Ա) Նախատեսել այդ շրջաններում խոտհունձի մեքենայական կայանների հետագա ընդարձակ զարգացումը, հասցնելով նրանց թիվը 1931 թ. վոչ պակաս քան 350-ի:

Բ) Ծավալել այդ շրջաններում, վորոնք մինչև այսոր յեղել են բացառապես անասնապահական, հացա-

հատիկային մշակույթների և բանջարաբույսերի, արտադրական բնույթ կրող ոռոգման ցանցեր:

Գ) Ուժեղացնել այդ շրջաններին մանուֆակտուրա, վառման և տեղում կաշուց ու բրդից պատրաստվող այլ ապրանքների մատակարարելու գործը:

Դ) Այդ շրջաններում անասունների կոնտրակտացիա կնքելիս նախատեսել կոնտրակտացիայի կարգով հացի անհրաժեշտ ֆոնդի ապահովումը ճիշտ այնպես, ինչպես այդ կատարվում է տեխնիկական կուլտուրաների նկատմամբ:

Ե) Մոտակա 2—3 տարվա ընթացքում վերջնականապես լիկվիդացիայի ենթարկել հատկապես քոչվորական անասնապահության համար կործանարար համաճարակները:

Զ) Ուժեղացնել անասնապահական խորհտնտեսությունների համար տեղական բնակչությունից պատրաստվող բանվորական կադրերի (նախրապանների, հովիվների և այլն), որակի բարձրացման ձեռնարկումները, կազմակերպելով այդ շրջաններում կարճատև կուրսերի և տեխնիկումների ցանց:

22) Խոշոր սպառողական կենտրոններում և հիմնական անասնապահական արտադրող շրջաններում կառուցվող կատարելագործված մսակոմբինատների համար կայուն հումքային բազա ստեղծելու նպատակով, առաջարկել ԽՍՀՄ Հողժողկոմին,

ա) մսի կոմբինատների կառուցման շրջաններում ապահովել անասնապահական խորհտնտեսությունների անհրաժեշտ ցանցի ծավալումը (Լենինգրադի, Մոսկվայի, Ուրալի մարզեր, Սիբիր և այլն):

բ) միջոցներ ձեռք առնել, որպեսզի 1933 թ. «Սվինավոդ»-ի խորհտնտեսությունները մսի կոմբինատներին հանձնեն առնվազն 6 միլ. գլուխ խոզ, իսկ կոլտնտեսական խոզաբուծական ֆերմաները՝ առնվազն 7 միլ. գլուխ, որով ընդհանուր առմամբ բավարարվի մսի կոմբինատների պահանջի 80 %-ը. 1935 թ. «Սվինավոդ»-ի խորհտնտեսությունների և կոլտնտեսական խոզաբուծական ֆերմաների կողմից մսի կոմբինատներին հանձնելիք խոզերի թիվը պետք է հասցնել առնվազն 15 միլ. գլխի.

գ) ապահովել «Սկոտովոդի» խորհտնտեսությունների կողմից 1933 թ. մսի կոմբինատներին ոչ պակաս քան 1 միլ. գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն հանձնելը, որը կազմելու յէ մսի կոմբինատների արտադրական կարողության ոչ պակաս քան $\frac{1}{3}$-ը:

դ) ապահովել «Օվցեվոդի» խորհտնտեսությունների կողմից 1933 թ. մսի կոմբինատներին ոչ պակաս քան 1,8 միլ. գլուխ ոչխար հանձնելը, իսկ 1935 թ. ոչ պակաս քան 3 միլ. գլուխ հանձնելը, որը կազմելու յէ մսի կոմբինատների բեռնավորման մոտ $\frac{2}{3}$ մասը:

23) Հանձնարարել ԱՊԽ-ին ոչ ուշ քան մինչև օգոստոսի 1-ը ապահովել համապատասխան ֆինանսավորումով անասնապահական խորհտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների ծավալման 3-րդ և 4-րդ կվարտալների ծրագրերը, ընդ որում ֆինանսավորումը պետք է հասնի այնպիսի չափերի, որպեսզի լիովին ապահովվի ներկա որոշումով նախատեսված ողջ պլանի իրագործումը:

24) Հավանություն տալ ԽՍՀՄ Հողժողկոմատի և Կոլտնտկենտրոնի որոշմանը, որով տվյալ որոշման համաձայն ավելացվելու յէ կաթնատնտեսական Կոլ-

տնտկենտրոնի վարկավորումը մինչև 165 միլիոն, ռուբլու, խոզաբուծական կոլտնտկենտրոններ՝ մինչև 55 միլ., ճտահան-թռչնաբուծական կենտրոններ՝ մինչև 38 միլ. և թռչնաբուծական կոլտնտեսական ֆերմաների արվելիք հատկացումները՝ մինչև 18 միլ., համապատասխան վերաբաշխման ենթարկելով ԽՍՀՄ Հողժողկոմատին բաց թողած երկարատև վարկերը ի հաշիվ երկարատև վարկերի պահեստի ֆոնդի։

ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ՝

Բ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

Համկոմկուսի (բ) Կենտկոմի քարտուղար՝

Ի. ՍՏԱԼԻՆ

ԱՐԽԻՎ

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0926446

1931 թ. - 500

1
2525

ԳԻՆԸ 5 ԿՈՊ. (3/4 մ.)

ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

**О РАЗВЕРТЫВАНИИ СОЦИАЛИСТИЧЕСКОГО ЖИВОТНОВОДСТВА**

(Обращение СНК СССР и ЦК ВКП (б))

Госиздат ССР Армении
Эривань—1931